ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 853-Ա « 08 » հուլիսի 2024թ.

«ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-24/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ներկայացված կոյուղագծի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման խորհրդատվական աշխատանքների գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-24/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Մեհրաբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/
Ա. Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Ս. Ամրոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջատար մասնագետ
Գ. Մանուկյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ
Ս. Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Է. Հարոյանին:

3.Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային

օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք.Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հ.120 սենյակ):

4.Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ